

ԻՐԱԿԱՆԻ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԻ ՀԱՐԱՐԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ
«ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐԻ» ԿԵՐՊԱՐՆԵՐՈՒՄ
(ՄԿՐՏԻՉ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԳԻՄԱՆԿԱՐԸ)

Ա. ՄԱԿԱՐՑԱՆ

Հակոբ Պարոնյանի ստեղծագործության գլուխգործոցի՝ «Ազգային շոշորի» բոլոր նախատիպերը եղել են հեղինակի ժամանակակիցները, իրական և կենդանի մարդիկ, որոնք, բացառությամբ միայն մեկի՝ Գրիգոր Արծրունու, գործունեություն են ծավալել հատկապես պոլսահայ գաղթօջախում: Նրանցից շատերը նշանավոր դեմքեր էին և անցյալ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրական-հասարակական մտքի ներկայացուցիչները: Երգիծաբանը ոչ միայն անձնապես ճանաչել է իր հերոսներից շատերին, լավ իմացել նրանց մտավոր ունակությունները և կարողությունները, հասարակական գործունեության ուղղությունը, վարքն ու բարքը, կենցաղը, այլև սթափ հայացքով որոշել է այդ գործիչների տեղն ու դերը շարունակ արյուն տվող փոքր ժողովրդի կյանքում: Մի խոսքով՝ գրողն ունեցել է «բնորոշների» աշխույժ պատկերասրահ, հետաքրքիր դեմքեր, որոնց կյանքի շատ դրվագներ նա հմտորեն օգտագործել է կրթիծական դիմանկարներում: Ստեղծագործական պրոցեսում, սակայն, էական դեր են խաղացել ոչ միայն իրական մարդկանց կյանքի շատ լավ իմացությունը, այլև գրական շքեղ ձիրքը և ստեղծագործական երևակայությունը, որոնց շնորհիվ տեղի է ունենում իրական փաստերի և գեղարվեստականի փոխներգործությունն ու համաձուլումը:

Այս առումով մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մկրտիչ Տիգրանյանի դիմանկարի կերպավորման եղանակները:

Տիգրանյանը եղել է բարձրաստիճան հոգևորական գործիչ, պաշտոնավարել Դիարբեքիի վիլայեթի մի շարք գավառներում և Կ. Պոլսում, եղել արկածախնդիր մարդ, վարել է տարօրինակ կյանք: Նրա մասին պոլսահայ մամուլում լույս են տեսել անբարենպաստ շատ թղթակցություններ, որոնք մերկացրել են այդ գործիչի կասկածելի վարքը, շահատակություններն ու զեղծումները: Ուշագրավ են նաև Երևանի Մատենադարանում պահվող երկու վավերագրեր՝ թվագրված 1854, նոյեմբերի 5: Մշեցի մի շարք քահանաներ և ժողովրդի ներկայացուցիչներ բազմաթիվ կնիքներով ու ստորագրություններով համախոսականներ են ուղարկել Կ. Պոլսի պատրիարքին՝ աղերսելով Մշո ս. Հովհաննու վանքի վանահայր Մկրտիչ վարդապետ Տիգրանյանին ազատել պաշտոնից, որովհետև նա քայքայել էր վանքը, վատնել նրա ողջ եկամուտը՝ կաշառքներ տալով թուրք պաշտոնյաներին և ուրիշներին, չէր հաստատել վարժարան և հոգ չէր տարել վանքի շինության համար. «Ուրիշ տարիներ տասնուհինգ հազար զուրուշ փարաթն ապրանք մեկ ապրանքի պես կու գայր եկամուտ վանքին աներկբա, այս տարին ալ եղած արդյունքը Մկրտիչ վարդապետ հավաքեց, կերավ, վատնեց և արյան գին տվեց: Համար առնելուն ետքը քառասուն և երկու քիսա փարա պարտք հայտնվեցավ խեղճ, ողորմելի վանքին՝ առանց վանքի շինության և վաթճառան հաստատության: Ամեն ինք իր գլխուն կաշառք կերցուցեր է անօրին տաճկաց կամ իր սիրտ հուզած մարդիկներուն, առանց վանքի միաբանաց գիտությունը, իր տված բաներն ալ մեկին չորս գրած է վանքի վերա: վանքը տերտեն ավիրվեցավ, քար քարի վրան շմնաց, բոլոր միաբանությունք ամեն մեկ իրեն ցրվեցավ, շատ խառնակություն եղավ... մենք ազգովին զանիկա չեմք ընդունի, պատճառն, որ վանորեից խանգարիչ է ու ազգին ալ վրդովիչ ու գայթակղեցուցիչ է»¹:

Մյուս վավերաթղթի հեղինակները ևս նշելով Տիգրանյանի վերոհիշյալ արարքները, նրան մեղադրում են նույնիսկ մարդասպանության մեջ և կշտամբում պատրիարքին՝ «գայթակղեցուցիչ և խռովեցուցիչ» վարդապետին վանահայր նշանակելու համար. «Ավա՛ղ և բյուր անգամ տամք մեզ ավա՛ղ Դի վրա ավա՛ղի, որ ասանկ ողորմելի վանորեից այդպիսի խանգարիչ և ազգիս գայթակղեցուցիչ վարդապետ առաջնորդ կը կարգեք, առավել այն ցավալին, որ առանց

¹ Երևանի Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթապանակ № 262, վավերագիր № 17 ա:

փորձելու վանահայր կը տնօրինե՞ք...»²։ Սրան հաջորդում է նաև համբերության բաժակը լըցված մարդկանց սպառնալի նախազգուշացումը պատրիարքին՝ կրոնափոխության վերաբերյալ. «Քե կուզե՞ք վանք մը քայքայվի և բոլոր ազգ մը գայթակղվի ատոր համար, մեզի փուլթ չէ, ուրիշ ազգեր շատ կան, պիտի ըլլամք անոնցմենն մեկ մը...»³։

Եվ, ահա, բազմաթիվ առիթներով ամբաստանված վարդապետը Կ. Պոլսում 1864 թ. գրում և հրատարակում է իր «Հայելի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Փյուրտիսթանու» գիրքը՝ փորձելով արդարանալ արեւմտահայ հատվածի հասարակայնության առաջ։ Գրքում նա մի քանի տեղ հիշոցներ է ուղղում Քաղեսու անվամբ մեկի հասցեին, նրան անվանում «հիմար, մորոս և անիծած», որն իր «զրպարտիչ և ստախոս տետում» հնարել է «Հայոց Մեծանուն տանը շեղած մերկութիւնը և շեղած պակասութիւնը»։ Տիգրանյանի հիշած այդ «տետորը» տպագրված դիրք է, որը կոչվում է «նկարագիր աղետից Երուսաղեմի»։ Նրա հեղինակն է Քաղեսու Միհրդատյանցը։ Ահա այդ գրքի մի բաժինը՝ «Համառոտ աշխարհագրութիւն Փյուրտիստանու և անոր սահմանին մեջ բնակյալ հայ ազգի ժողովրդոց», նվիրված է Դիարբեքիւրի վիլայեթի բնակիչների խեղճությանը և Մկրտիչ Տիգրանյանի վարքին։

Միհրդատյանցը նպատակաւայց և պատկերավոր մերկացնում է հոգևոր գործի դիմակի տակ թաքնված շահասեր և խարդախ մարդու բարոյական դեմքը, անվանում «հրեշագործ վարդապետ» և մեղք համարում նրան՝ ժողովրդին առաջնորդ կարգելը։ Տիգրանյանը «15 տարին 'ի վեր Փյուրտիստանը պիտի բարեկարգեմ ու զպրոց պիտի ճատատեմ քսելով աշխարհք ողորոցելու և դեռ կը թնդացունե կոր ալ՝ լրագրաց միջոցներով... որով և բազմագումար դրամ ու նպաստ և ձեռնտուութիւններ ու պարգևներ ալ հավաքեց ու դեռ կը հավաքե կոր ալ... բայց արդյունք՝ ո՛չ մի ինչ»⁴։ Այնուհետև հեղինակը հարցնում է, թե «արդո՞ք ո՞ր է և աշխարհիս ո՞ր կողմ է իրեն բացած անգո դպրոցը» և ավելացնում, որ Տիգրանյանը, համագործակցելով քրդերի և սուլթանական կառավարութայն հետ, անխղճորեն հարստահարում է «աղավնաբարո եղբայրներուս», այսինքն՝ գավառաբնակներին, և կարող է իր դեմ կանգնած մարդկանց «կյանքն ալ բառնալ տա՝ յուր սքանչելոցը»։

Պարոնյանն, անշուշտ, ծանոթ էր և՛ Տիգրանյանի մասին մամուլում եղած կարծիքներին, և՛ Միհրդատյանցի գրքին, և՛ բազմաթիվ տպագիր այլ աղբյուրներին։ Տիգրանյանին նվիրված դիմանկարում նա հիշում է «Հայելի գործոցը...» և գրում. «1841-ին ձանձրանալով վանքին մեջ անգործ մնալն, ճամբա կ'ելնե Փյուրտիստանի բարեկարգութայն համար, ինչպես կը գրե ինք յուր Հայելի գործոցին մեջ, հայելի մը, որ դժբախտաբար շատ լավ կը ցուցնե անոր պատկերը»⁵։ «Ազգային շոչերում» օգտագործված աղբյուրների վերաբերյալ սա այն հիշատակութիւններէջ մեկն է, որն օգնում է ուսումնասիրելու երգիծաբանի ստեղծագործութայն ուշագրավ առանձնահատկութիւնները։

Տիգրանյանը «Հայելի գործոցում...» իրեն ներկայացնում է իբրև անբասիր հատկութիւններով օժտված ազնիվ անհատականութիւն, մի առաքյալ, որին նախանձից շարունակ հալածել են «օձարնուլթ և գայլասիրտ» թշնամիները։ Գրքի հենց սկզբից նա արդարանալու ճիգեր է անում, իր դեմ լարված որոգայթների պատճառը տեսնում իր արծանիքների մեջ և հալածյալների կյանքից բազմաթիվ օրինակներ բերում Ս. Գրքից, ազգային ու համաշխարհային պատմութիւններից։ Ահա դրանցից մի քանիսը. «Քե որ Հովսեփ-Գեղեցիկ՝ ծաղկյա-պատմութեան շահանք՝ և երազ շտեսներ, եղբարցմե հորու մեջը չէր ձգվեր... Տերն մեր Հիսուս Քրիստոս՝ քանի որ Քառազուրյան և բծղիւրյան չէր սկսած, զինքը ո՛չ բամբասող կար և ո՛չ ալ թաշող... Քե որ Գրիգոր-Լուսավորիչ՝ Տրդատին կամացը հնազանդեր, ատթան շարշարանք չէր քաշեր... Քոլոմպոս՝ թե որ նոր երկիրներ գտնալու շախատներ, շղթայակապ Սպանիա չէր դրկվեր... Տիգրանյան Մկրտիչ վարդապետն ալ՝ թե որ Պոլստ մեջ և թե գնացած Առաջնորդական վիճակները՝ բարեկարգութիւններու քարոզելու չպարապեր, իրեն ալ հալածանք և թըշնամիք պիտոր լըլլային»⁶։ Եվ այսպես, նա «միտիթարութիւն վշտակիրներուն և ստութայն դեմ ճշմարտութայն քարոզ» գրքուկում շարադրում է իր արկածալից կյանքի պատմութիւնը՝ արդարանալու ապարդյուն ջանքերով և միամիտ փաստարկումներով, որոնք անընդհատ համեմվում են կրոնա-բարոյախոսական քաղվածքներով։ Անգամ ինքը հեղինակն է կասկածում, որ գրքուկը կարդալուց հետո մարդիկ «երարու երես կը նային ու քիթերուն տակեն կը ժողրեն», բայց անմիջապես «պաշտպանվում» է ապագա ծաղրողներից՝ «արհամարհելով» նրանց. «Կու-

² Նույն տեղում, վավերագիր № 17 ք։

³ Նույն տեղում։

⁴ Քաղեսու Միհրդատ Ս. Աստվածատուրյան Միհրդատյանց, Նկարագիր աղետից Երուսաղեմի, Կոստանդնուպոլիս, 1860, էջ 229։

⁵ Հ. Պարսեյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, Եր., 1964, էջ 65։

⁶ Հայելի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Փյուրտիսթանու, Կոստանդնուպոլիս, 1864, երես 7—9։

համար պիտի ստեղծվեր Ազգային սնդուկ, որի հասույթները հսկվելու էին հատուկ հանձնա-
ժողովների կողմից, պարբերաբար քննվելու էին տումարները, կարգավորվելու էին մկրտու-
թյան, ամուսնություն, մահվան արձանագրությունները: Կանոններում որոշակի կետեր կային
նաև վարդապետների ու քահանաների պարտավորությունների վերաբերյալ, որը տղաների
համար հաստատվելիք վարժարանների ու հոգևորական կանոնավոր ժողովների հրավիրելու
մասին: Բայց, ինչպես նշում է Տիգրանյանը, իր ազնիվ նկատառումները հանդիպել են ինչ-որ
հակառակորդների, որոնք անունը նա չի հիշում. «Վերջապես հիշյալ վարդապետը (Տիգրան-
յանն իր մասին է ասում— Ա. Մ.) հակառակորդին շարահար վարմունքն է թունալի նե-
տերեն գզուլություն արահուցնելու ինքը զինքը. «Մի՛ կալ հակառակ շարին»... ըսավ, ձգեց
գործքերը երեսի վրան. 30 ժամ հեռի գնաց սուրբ Հոհաննես վանքը վանահոր քովը»¹¹:

Այնուհետև Տիգրանյանն իրեն վերագրում է բազմաթիվ գործեր, խոսում է շատ թշնամի-
ների մասին, որոնց դեմ ինքն իբր մաքառել է: Այդ հիման վրա Պարոնյանը Տիգրանյանին
համեմատում է Գոն Կիստոի հետ, որն, ինչպես գիտենք, հողմաղացներին դնում է «երեսուն
ահեղ հսկաների» տեղ ու «գծնդակ և անհավասար մարտ» մղում նրանց դեմ. «Քյուրտստանի
բարեկարգության խնդիրն, ինչպես հայտնի կը տեսնվի, Տիգրանյանի օրով ծնած է: Հայաս-
տանի վանքերուն և Քյուրտստանի բարեկարգության վրա տասներեք հողվածներն բաղկաց-
յալ կանոնագիր մը կը խմբագրե, և երբ անոնց գործադրությանը պիտի ձեռնարկե, յուր դեմը
կը տեսնե Տոն Քիշոթի օղալին ախոյանները, որոնց դեմ թեպետև քաջությամբ կը կռվի, բայց
հաղթվելով ետ կը դառնաս»¹²:

Տիգրանյանը տեղագրիչ ջանում էր ապացուցել զավաններում քսան տարի առաջ իր բա-
ցած վարժարանների գոյության փաստը, գիրքը հեղեղում է գյուղերի ու վարժապետների ա-
նուններով և իր ճշմարտախոսությունը հաստատելու համար ավելացնում է, որ միայն մի տեղ
իրեն չի հաջողվել վարժարան ստեղծել, որովհետև այնտեղի բնակիչները «քնամվ Հայերեն չեն
գիտեր, և ո՛չ ալ եկեղեցի ունին. անտեր և անխնամ ժողովուրդ մը. աս տեղս չկրցավ վար-
ժարան բանալ զանազան դժվարին պատճառներու համար:

Ասոր համար է որ հասարակորեն կ'ըսեն.

Պաղ ջուրը կուգա մեծ Սիլիվանա,
Գեշ Բրթու տղան է սև սառանա.
Ա՛ն բուրդ բամբակը շուտով մկրտե,
Կ'ուզե Հայ մեա, կ'ուզե Թրքանա»¹³:

Երգիծարանն անմիջապես որսում է Տիգրանյանի կատարած բացառության իմաստը, «ազ-
նիվ խոստովանությունը» և, օգտագործելով նրա մի նախադասությունը՝ Սղերդի առիթով («Այս
նահանգին մեջն է Եգիտի ըսված աղանդավորները, որն որ՝ սատանային գեշ չեն ըսեր»), սա-
տիրական նպատակալաց պատկերով ոչնչացնում է վարժարանների հաստատելու ողջ հեջիաթը
և նրան համարում սատանա. «Քյուրտստանի մեջ վարժարաններ կը չինե... օգի մեջ: Սիլվանա
մեջ կը փափաքի վարժարան մը հաստատել... գետնի վրա, բայց այս գործը քիչ մը դժվար
ըլլալով փափաքն չկրնար իրականացնել, մանավանդ թե Սիլվանաբնակ ազգայիններն հայերեն
չէին գիտեր, անխնամ, անհովիվ և անտերունչ մնացած էին: Այս ժողովրդյան համար հասա-
րակորեն կ'ըսեն եղեր

Պաղ ջուրը կուգա մեծ Սիլիվանա
Գեշ Բրթու տղան է սև սառանա.
Ա՛ն բուրդ բամբակը շուտով մկրտե:
Կ'ուզե հայ մեա, կ'ուզե Թրքանա:

Այնպիսի գեղի մեջ, որուն վրա ասանկ ոտանավոր մը կը գրուցվի, վարժարան բանալը
հայտնի է թե որչափ դժվար գործ մ'է. լավ չենք հիշեր Սղերդի՝ մեջ թե երազին մեջ ալ վար-
ժարան մը կը բանա. սակայն լավ կը հիշենք, որ Սղերդի մեջ են Եգիտի աղանդավորներն,
որոնք սատանային համար գեշ չեն ըսեր եղեր: Գիտողության արժանի է, որ հիշյալ աղան-
դավորները Մկրտիչ եպիսկոպոսին վրայոք ալ զովեստով կը խոսին»¹⁴:

Եվ այսպես, Պարոնյանը հավատարիմ է մնում Տիգրանյանի բերած կենսագրական տրվ-

¹¹ «Հայելի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Քյուրտսիսթանու», Կոս-
տանդնուպոլիս, 1864, էջ 18:

¹² Լ. Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, Ե., 1964, էջ 65:

¹³ Հայելի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Քյուրտսիսթանու, Կոս-
տանդնուպոլիս, 1864, էջ 24:

¹⁴ Լ. Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, Ե., 1964, էջ 65—66:

յալնեբրին, այնտեղից բազում թվականներ ու պատկերներ, ուշադիր հետևում նրա կյանքի հետագա ուղուն: Դիմանկարի յուրաքանչյուր հատված դառնում է «Հայելի գործոցի...» համապատասխան հատվածի ինքնատիպ արձագանքը: Նա, կարծես, կտոր-կտոր հավաքում է դիմանկարը՝ յուրաքանչյուր պատկերում բացահայտելով կերպարի մի նոր, բնորոշ գիծ: Գա արվում է ընտրութայան մեջ հմտությամբ ու գեղարվեստական բացառիկ տաղանդով: Իրար են հաջորդում արկածախնդիր «չոչի» կյանքի պատկերները: Նա երևում է քանտարկտիկյան ժամանակ, երբ բրդեբնիկ է թարգմանում Ավետարանը, որպեսզի «քրտեբնն գիտցող ազգայիններն ալ հասկնան Ավետարանի հոգին և իրեն օրինակին շհետևին», հայոց պատրիարքից սուլթանին բողոք ներկայացնելիս, որն «ազգին իրավունքները պաշտպանելու նպատակով դատ բացած էր ազգին պատրիարքին դեմ» և ուրիշ շատ պատկերներում: Հատվածների ընտրությունը, երգիծաբանի փոքր ու մեծ սրամիտ հավելումները մեծ կենդանութուն են հաղորդում կերպարին: Օրինակ, Տիգրանյանը նշում է, որ դիմել է Պոլիս՝ Տատյան Հովհաննես պեյին, նրա ծախսով փնտրելու Մար Աբաս Կատինայի «Հայոց պատմությունը», իսկ երբ գնացել է «Ասորեստանու վանորայքը», «շատ ծախսեր ընելով» չի գտել: Այժմ տեսնենք, թե այս հիշատակութունն ինչպիսի հմտությամբ է ձուլվել դիմանկարին՝ բացահայտելով «չոչի» քնավորության գծերից մեկը՝ դրամաշրթությունը. «Սակայն գործող մարդ մը բանտին մեջ շկրնար երկար դառն մնալ. ուստի այս անգամ ալ բանտեն ազատվելու համար կ'առաջարկե որ Հայաստան հառն և Մարտիրոս Կատինա Հայոց պատմությունը գտնե: Ամիրային մեկն այս առաջարկությունն ընդունելով դրամ կուտա իրեն, որ երթա գտնե այս Ազգային Պատմությունը գոր՝ թեպետև գտած կը համարի Տիգրանյան դրամը գրպանը նետելուն պես, սակայն նորեն ճամբա կ'ելնե»¹⁵:

Ստեղծագործական գյուտ է նաև դիմանկարի այն հատվածը, որը պատմում է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում Տիգրանյանի կատարած «հրաշագործությունների» մասին: Այստեղ աղբյուրը դարձյալ «Հայելի գործոցի...» է, ուր հեղինակը գրում է, թե ինքը քարոզությամբ բուժել է բազմաթիվ հիվանդների, որոնք հետո «կուզային շնորհակալության. թե՛ մեք բժշկվեցանք» և որպես իր «հրաշագործության» «ապացույց», ավելացնում է, թե «փնտրողը կրնա գտնալ բժշկայլները»: Պարոնյանը դիմանկարում ստեղծում է այս մասին պատմող մի ընդարձակ հատված, ուր սարկաստիկ երանգներով մերկացնում է «հրաշագործի» խաբեբայությունը և հոգևոր գործչին անվայել արարքները. «Այս թվականին Սամաթիո Ծնի Մահալեի քարոզիչ կը կարգվի. բայց քարոզությամբ շկրնալով ապրիլ, կ'սկսի հրաշագործության: Կաղեր, կույրեր, խուլեր, համրեր, այասհարներ, անդամալույծներ կը բժշկեր: Ամեն օր հիվանդներ կ'երթային իրեն:

— Հայր սուրբ, իմացանք որ դուք ամեն ցավերը կը փարատեք:

— Հրամեք եք, օրհնած:

— Քանի շաբաթե ի վեր զլիսու ցավ ունիմ, կ'ուզեմ որ փարատեք:

— Գլո՛ւխդ թե ցավդ:

— Գլուխս, հայր սուրբ, գլուխս:

— Շատ լավ, ինձի համար երկուքն ալ միևնույն բանն են: Եկուր խաշահանգիստ մը ընեմ: Մարդը կը մեկնի և քանի մը ժամեն ետքը անդիի աշխարհքը կ'երթա:

Երկրորդ մը կը ներկայանա.

— Հա՛յր սուրբ, սենյակին պատուհանը կոտրվեցավ:

— Պատուհանը հոս բեր, վրան բժշկության ավետարան մը կարդամ»¹⁶:

Կերպարի կենդանությանը մեծապես նպաստում է նաև նախատիպի օգտագործած ոճի աշխույժ կիրառությունը դիմանկարում: Տիգրանյանն իր գրքում անընդհատ հաշվում է իր ճանապարհորդության ժամերը՝ «զգազաններու և գողերու վտանգավոր ճիրաններեն» որքան ճանապարհ է անցել և որքանը ձիով կամ ոտքով՝ բուրդին ի ցույց դնելով իր շարշարանքները. «Մշո 47 ժամ Տիգրայեքի. 18 ժամ Մերսին. 69 ժամ Մուսալ. 39 ժամ Քարթուք. 51 ժամ Պաղտատ. 112 ժամ Քիրմաշ...»¹⁷: Եվ Պարոնյանը նրան հեղինակով, դիմանկարում տարբեր առիթներով թվարկում է Տիգրանյանի որբորդ անգամ Պոլիս գալը՝ ստեղծելով մի կողմից դիմանկարի ընդհանուր կառուցվածքին հարազատ ոճ, մյուս կողմից՝ դարձյալ «մոխր խառնած» գործչի խառնակիչ քնավորությունը:

Ինչպես արդեն նշվել է, Մկրտիչ Տիգրանյանի կերպարը ձևավորվում է նաև երգիծաբանի կատարած երևակայական հավելումներով: Եվ ահա, դիմանկարի վերջին հատվածներում նա բնութագրում է «չոչի» հակաժողովրդական գործունեությունը, ամփոփում կերպարը, որը դառնում է ընդհանրապես շահասեր հոգևորականության դեմ ուղղված ծաղր. «Հրաշագործն գիտ-

¹⁵ Նույն տեղում, էջ 67:

¹⁶ Նույն տեղում, էջ 68:

¹⁷ Հայելի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Քյուրտիսթանու, Կոստանդնուպոլիս, 1864, էջ 20:

նական մ'է, սակայն շատ խնդիրներու մեջ կը տարբերի դարուս մյուս գիտուններն: Օղբ չէ որ, կ'ըսեմ, շրջապատած է մեր բնական երկրագունդն, այլ խարեությունն, որ

Անտր է, վասն զի հաշիվներու ամենափոքր մասերու մեջ կրնա մտնալ:

Տարածակամ է, վասն զի պարագաներու համեմատ յուր նախկին ծավալն ավելի մեծ ծավալ կրնա ունենալ:

Քափանցիկ է, վասն զի շատ մը կրտնավորներ անոր մեջն կ'անցնին:

Առաձգակամ է, վասն զի կրնա ճնշվիլ Պատրիարքարանն, բայց նորն յուր առաջին ծավալը կ'առնեն¹⁸:

«Հայելի գործոցի...» վերջում Տիգրանյանն ընթերցողներին տալիս է մի յուրօրինակ խրատ. «Ազգիդ, եկեղեցվույդ, քաղաքացվույդ, գեղացվույդ, դրացնույդ և ընտանյացդ մեկ պակասությունը տեսար, ինչքան կրնաս զանի գաղտնի կերպով խրատե հորդորե, շիտակ ճամբու վրան բե՛ր. ատիկա է մեծ առաքինություն»¹⁹: Մեծ երգիծարանը, սակայն, այլ կերպ էր հասկանում առաքինությունը և միշտ հավատարիմ է մնում ծիծաղի հզոր գեներին. «Մոլություններու վրա ծիծաղին առաքինության ճանրուն մեջ գտնվիլ կ'ենթադրե և, այս հաշվով, որչափ շատ ծիծաղ քաղեն՝ այնքան նվազ մոլություն պիտի գտնեն»²⁰: Եվ, ինչպես տեսնում ենք, նրա երգիծանքը բոլոր կետերում հենվում է կյանքի իրական փաստերի ու կենդանի դեմքերի վրա, որոնք դառնում են մեծ ու խոր ընդհանրացումների ակունքներ:

А. А. МАКАРЯН — Соотношение действительного и художественного в образах «Национальных тузов» (портрет Мкртича Тиграняна).— Все прообразы персонажей произведения Акопа Пароняна «Национальные тузы» были современниками автора. реальными и живыми людьми, которые нашли свое художественное воплощение в образах. В этом смысле отдельный интерес представляет образ Мкртича Тиграняна. Опираясь на данные западноармянской печати второй половины прошлого века, другие печатные источники и книгу, изданную самим прототипом, автор статьи анализирует соотносимость действительного и художественного в образе Тиграняна. В ходе этого раскрываются некоторые важные особенности творческой манеры выдающегося сатирика, в частности подтверждается, что его сатира является своеобразным сплавом реальных фактов жизни и художественного воображения. Паронян, с одной стороны, силой художественного вымысла рисует типические образы, с другой стороны, создает литературную пародию на опубликованную прообразом книгу; сообщаемые персонажем реальные факты он превращает в сатирическое разоблачение, направленное против него же.

¹⁸ Հ. Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, Ե., 1964, էջ 72:

¹⁹ Հայելի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Քյուրտիսթանու, Կոստանդնուպոլիս, 1864, էջ 146:

²⁰ Հ. Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 4, Ե., 1965, էջ 375—376: